

Յոբելինական այս հանգրուանին, մաղթում եմ, որ Տէրը Հայ Գրականութեան սակաւամշակ այգին օժտի նոր ու նուիրեալ մշակներով, որպէսզի նրանք Օշականեան սիրով, խանդով ու մանաւանդ կիրքով կարողանան դարձնել այն առատ ու հասկաշատ՝ «մէկի տեղ երեսուն, վաթսուն եւ հարիւր», ու տան պատուաբեր ու պատկառելի արդիւնք՝ «ի ժամանակի հնձոց»:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Ան որ ամենաերկար գաւազանը (ոյժ) ունի, ա՛ն ի վիճակի է ստեղծելու քաղաքակրթութիւն:

Ճակատագրական պիտի ըլլար մեր կեանքերը բնորոշել հիմնուած միակ յաջողութեան մը և կամ ձախողութեան մը վրայ:

Չար մարդոց խիղճերը կ'արթննան միայն տարտարոսի մէջ, երբ բոցերը սկսին լիզել անոնց ոտքերը:

Եթէ փորձես սէրէն փախչիլ, ամբողջ կեանքիդ մէջ ապերջանիկ կը մնաս:

Երբ կը սիրենք՝ մենք մեզ աշխարհի տէրը կը զգանք, կարող՝ անկարելին կարելի դարձնելու և աշխարհի անարդարութիւնները սրբագրելու:

Մարդուն տարիքը կը չափուի անոր ներքին նեխածութեամբ:

Իրա՛ւ երջանկութիւնը միայն մէկ անգամ կը բախէ մեր դուռը:

Իսկական երջանկութիւնը կարճատեւ և չափազանց փխրուն զգացում մըն է:

Վախկոտները մի քանի մահ կ'ունենան, մինչ քաջը՝ միայն մէկ:

Գիշերը ունի հազար աչքեր:

Մենք երբեմն կը խօսինք ա՛յն լեզուով՝ որ բառարան չունի:

Մարդուն մեծագոյն առաքինութիւնը պէտք է ըլլայ իր միտքն ու հոգին դարձնել վերանորոգիչ գաղափարներու ընդունարան, ճանչնալ մեծութիւններն ու տեղ տալ անոնց իր մտքին և հոգիին մէջ:

Շատ խօսք ունեցող մարդը քիչ գործ կը տեսնէ:

Ինչպէս որ զգեստը չգործածուելով ցեցերու կեր կ'ըլլայ, նոյնպէս ալ մարդը եթէ անգործ մնայ մեղքերու ցեցով կ'ապականի:

Ան որ ինքզինք գերին կ'ընէ սուտին՝ կը կորսնցնէ իր խօսքին հեղինակութիւնը եւ հետեւաբար ատելի կ'ըլլայ Աստուծոյ և մարդոց աչքին: